

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԵՐՉՈՒԹԵՆՔ ՃԵՄԱՐԱԿԱՆԻ

1. Քննութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Շեմարանի Մայր Շխոռոյս Արբոյ Աջմածնի կատարին մի անգամ և եթի տարւոց և այն աւուրբք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ:

2. Յանկացողք մտանել յաշակերտութիւն Շեմարանիս մատուսցեն խնդիր յանուն Անհափառ կաթուղիկոսին, ոչ անազան քան զմին յուլիս ամսոյ:

3. Ընդ խնդրագրին պարտէ առաջի առնել զվայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4. Կորեկ աշակերտք և ուսանողք զննին ի քժշկէ Շեմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա:

5. Լ դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առունին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան Շեմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից:

6. Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս Շեմարանիս. իսկ վասն մտանելոյ յ՛ռաջին լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարևոր համարիցի Ուսումնական Խորհուրդն:

7. Յանկացողք մտանելոյ յ՛ռաջին լսարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից Ե՛ւրական եկեղեցական ծխական ուսումնարանաց. իսկ վասն մտանելոյ իմիւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Անհափառ կաթուղիկոսէն, ի պէտս Աւագան դպրոցաց:

7. Յանկացողք մտանել յ՛ռաջին լսարան

Ճեմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացին դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս, ենէ չնէ առաջանանաւութեալ իշել է վերայ առաջեւ առաջ դամ ի՞:

8. Յետ հարցաքննութեան ընկալեալ լիցին ի շարս աշակերտաց՝ որք արժանաւոր դատիցին յՈւսումնական լսորհրդոյն:

Ծանօթութեալ Պահանջի՝ զե ընկալեալքն յաշակերտութիւն լիցին ուշիմք, երկարողիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք:

9. ԵՊ. դասարան Ճեմարանին ընկալեալ լիցին պատանիք 14—16 ամեայ, և ըստ այսմ համեմատութեան ի յաջորդ դասարանս:

10. Վշակերտք Ճեմարանի գիշերօթիկք են ամենեքեան, թէ ճրիավարժքն և թէ թոշակատուքն որք ստանան զուսումն, մնունդ, հագուստ և զամենայն առողջապահական խնամ:

11. Թիւ ճրիավարժից, որ ի հաշիւ Այր Աթուոյս, որոշի ամ ըստ ամէ, ըստ բարեհաճ կարգադրութեան Անհափառ կաթուղիկոսի:

12. Վշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսկոյս կովկասեանք 50 րուբլիս, իսկ եկեալքն յայլոց վեճակաց Ուսուսատանի կամ ի աար աշխարհաց՝ րուբլիս 75, որպէս զե հատուացի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս, ևս և ի գին կորուսեալ և վատնեալ գրենոյ, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց:

13. Խւրաքանչեւք թոշակատու վճարեսցէ ի տարին րուբլիս 200, ի կրկին նուագս. ի Սեպտեմբեր և ի Յունուար ամիսս:

14. Նթէ թոշակատու ոք ելցէ կամ արձակիցի մինչչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, գրաւական նորա ոչ դարձուացի յետու:

15. Յամառնային արձակուրդս, եթէ ծնողք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի հայրենիս, ծախսք երթևեկութեանց նոցա լիցին ի ծնողաց կամ ի բարերարաց: